

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Որոնումների, նոր ուղիների երերուն փնտրումի նախարանն ենք ապրում՝ օրը օրին անակնկալներ մատակարարող տազնապալի ժամին:

Մի կողմից ուժգին վայնասունն է լսում դեռ երեկուայ զովքին արժանացած անցեալի հասցէին միւս կողմից, ոչ այնքան էլ ընական, անտեղի ոգեւորութիւնը անյայտ ապագայի նկատմամբ:

Հասարակագիտօրէն միանգամայն հասկանալի դրութիւնը առողջամիտ դատողների համար նորութիւն չլինելուց զատ ոչ սրտնեղութեան եւ ոչ էլ զգայուն ոգեւորութեան առկիթ պիտի տայ:

Պատմութեան մէջ հասարակութեան նման դրութիւնները եղել են ու պիտի լինեն: Տէնց հայ հասարակութիւնն էլ մի տասնամեակ միայն առաջ նման հոգեկան աշխարհն ունէր աւելի համեատ ու փոքր չափով:

Խիստ ձգտումների, գրաւիչ, կարօտի առարկայ դարձած անկնկալութիւնների շիրականանալը անպայման հիասթափութեան ու սաղա վերագնահատման է տանում հասարակութեան: Հոգեկան ծնշիչ, անզամ յուսահատութեան հասցնող դրութիւնն է ստիպում մի փոքր շունչ քաշելու, հեղձուցիչ մթնոլորտը թարմացնելու համար անցածը վերագնահատել, որ նոր ուղի փնտրել կնշանակէ:

Կենսունակութեան լաւագոյն ապացոյցը համարելով որոնումը՝ ուրախ լինենք, զո՞ն այդ դրութիւնից, ըայց շխուսափենք այդ նոր ձգտումն էլ իր հերթին քննութեան տակ առնելուց:

Հիասթափութեան ուժգին ապրումը հակադիր՝ ծայրայեղութեան է տանում անխուսափելիօրէն եւ մեր վերա-

գնահատումը՝ որքան անցնալի նկատմամբ է անողոր, անարդարացի լինում, նոյնքան ապագայ նոր ուղու փնտրումի խնդրում չափազանցութիւնից չէ զերծ մնում:

Եւ այս երկու ծայրայեղ դրութեան մէջ է գտնւում հայ մտաւորականութիւնը ներկայումս եւ նա մենակ չէ այս դէպքում իւր դրացի հարեւան ժողովուրդների՝ մեծ, թէ փոքր մտայինները նոյնպիսի քանդում-չինումի, անէծք-օրհնանքի աշխարհում են ապրում:

Զգացմունքը իր տարերային ոյժով զերակշռող դերն ունի այս դէպքում, քայց քանականութիւնն էլ քնած չէ: Մերթ ընդ մերթ է լսւում վեհօջինիս ձայնը, երբեմն անարձագանք կողշում, քայց նա կայ ու այստեղ է որ նոր ուղու էութիւնը պիտի փնտրել, նա է, որ իր առայժմ թոյլ, ապագայում աւելի ուժեղ, լոյսը պիտի սփռէ առաջներս ձգուած ուղին լուսաւորելու:

Արդէն այժմեանից այդ լոյսը երևում, դողլոջուն ցոլքերով նոր-ուղու ուրուագիծն է տալիս, մի ուրուագիծ, որը ճարակուող սլատերազմի նշանաբաններից է բոխում: այդ ազդային զարգացման, ազգայնօրէն ապրելու ու յառաջադիմելու պահանջն է:

Ակներեւ է արդէն, որ հայ մտայնութեան համար ազգային մշակոյթի ապահովման ու զարգացման հարցը նոր ուղու էտիան-ընտրոշ կողմն է լինելու:

Հայ լեզուի, գրականութեան նկատմամբ ունեցած հայ մտայինի ոգեւորութիւնը ու նրանց պաշտպանութեան համար ընծեռած միջոցները այժմեանից նոր ուղու-որոնումի ընդթը լիովին են որոշել:

Այդ սրտապնդող դրութիւնն է ամենից մխիթարականն ըստ իս այս տազնապալի վայրիվերումների ժամին: Եւ ընդհանուր յախուռն՝ յաճախ վտանգաւոր ու անտեղի գրչակուի ժամին այդ կէտն է մեր համագործակցութեան անխախտ հիմքը դառնալու, հանրային աշխատակցութեան ամուր օղակը լինելու:

Ուրոյն ազգ լինելու, ուրոյն մշակոյթ ունենալու եւ սրա զարգացման իրաւունքը ընդմիջտ ապահովելու ուժեղ պա-

հանջը ամրապնդելու համար մեր հեռավոր ու մերձավոր անցեալին ենք դիմել, որոնումները այնտեղ են ևս տարւում միշտ նոր ակնկալների հանդիպելու լարուած հոյեացքով, մեր պահանջը լիովին բաւարարող տուեալներ գտնելու ծրագրումով:

Նւ այս ոչ նոր, բայց իւրատեսակ, հազիւ մի տարի տեւող, պրպտումները մեզ անդադար զօտեպնդող, յուսատու, առաւել եւս որոնելու պահանջ զգալու գեղեցիկ փաստեր են տալիս: Ոչ միայն մենք, այլ անգամ օտարներն են մեզ մեր հայրենի մշակոյթի զանօները բանում, այդ ցայսօր գուրգուրանքից հեռու մնացած անցեալի հրապոյրն աւելացնում:

Այդ զօտեպնդիչ որոնում պրպտումների մէջ հայ մտայնութեան ուշադրութիւնը կուգէի դարձնել մեր մշակոյթի մի այնպիսի ուժեղ գործօնի վրայ եւս, որը իւր հնութեամբ, իւր հարստութեամբ ու դերով հզօր է, բայց որին կարծես չեն տեսնում կամ տեսնում են ու չեն ուզում ծանաչել:

Թող ներքի սասել, որ նման որոնումների դէպքում որքան եւ յեղափոխիչ ոգին գերակշռող է լինում մեր հոգում այնուամենայնիւ որոշ մտափախութիւն, մնում է մեզնից անբաժան եւ պատճառ դառնում միակողմանիութեան, սկսած գործի անկատար, շամբողջացրած մնալուն:

Հայ լեզուի, գրականութեան, արուեստի գոյքն ենք անում նոր ուղու սկզբին ու մոռանում 1600 տարուայ ուշազրաւ տոկունութիւն, դիմացկանութիւն ցոյց տուող հայ եկեղեցուն:

Էզգային մշակոյթի գործօններն ուժեղացնելու, զարգացնելու աշխատանք ենք թափում, քննեռում ու մոռանում ենք այդ մշակոյթի մէջ դարեր շարունակ արնաքամ լինելով օրն ի րուն աշխատող հայ եկեղեցուն:

Ինչո՞ւ մտափախութիւնն այդքան խորն է արմատաւորուել մեզանում, որ չենք ուզում տեսնել, աչք են գոցում այն աւերակներից միշտ ելնող, նոր թափով գործ սկսող սրբազան իմաստբոլութիւնը՝ որի ծոցից են ելել հայ մշակոյթի այն շատագոյնները, որոնց շատերով հպարտանում ենք այժմ, այն տուեալները՝ արուեստի, գիտութեան, որոնք

մեր ուրոյն մշակոյթի զարգացման աղբիւրն են դառնալու եւ հիմնաքարերն են:

Հայ ժողովրդի ուրոյն զարգացման ընտրոշ կողմերից մէկն էլ ազգային եկեղեցի առաջ բերելը, զարգացնելն է: Այդ սրբազան հիմնարկութեանն է զոհել հայ մարդը անդադար իւր եւ կեանքը եւ ստացուածքը: Հայ մարդը իւր շճուլուելու, շտաւրամալու պինդ պահանջի համար իւր ստեղծած ու պահած եկեղեցուն է ապաւինել:

Եւ այսօր, երբ այդ նոյն ժողովրդի ազգայնօրէն յառաջդիմելու խնդիրն է ծառացել մեր առաջ, մենք այդ ուժեղ գործօնը չենք ուզում տեսնել. նրա զոյութիւնը լռութեան քաժին ենք դարձնում:

Միայն ցաւալի մտավախութեան պիտի վերագրել այս երեւոյթը, որի պատճառների մասին շատ է խօսուած ու գրուած:

Մեր ժողովրդի ինքնուրոյն ստեղծաշործութեան տուեալներն ենք փնտրում: մեր նոր ուղին պարզելու եւ այդ իսկ ժողովրդի ծնած, պահպանած մեծ տուեալը չենք ուզում տեսնել. այդ մեր որոնումների թերի կողմն է, որը մատնանշելու անհրաժեշտութիւնը ուժգինս զգացում է:

Որքան յուսատու, ողբերոգ աշխարհ քացուեց մեր առաջ միջնադարի քնարերգուներով հետաքրքրուելովը, նոյնքան ու դեռ շատ ու շատ աւելի նրգեւորող գանձեր կան թաղնուած մեր ազգային եկեղեցու՝ նրա մեծագործ հոգեւորական աշխատաւորների թողած գործերում:

Հայ ժողովուրդն իւր ոգու, իւր ծգտման, իւր իրրեւ ուրոյն ազգ ապրելու հոգու պաշարը այնտեղ է ամբարել: հայ ազնուականն ու ռամիկը այնտեղ է զոհաբերել իւր ունեցած նիւթական ու հոգեկան կարողութիւնների լաւագոյն արտադրութիւնները:

Այդ նոյն հայ ժողովրդից ելած, նրա մէջ սնուած, նրա քախատաւորութեան համար աշխատող՝ զաւակներն են մտել այդ սրբազան հիմնարկութեան մէջ ու տրնել, երկնել, սեփական լաւն ու գեղեցիկը:

Մինչ օտարներն են իսկ հիանում, զմայլում մեր ազ-

գային մշակոյթի այդ հարուստ կոթողով, մենք անգամ մեր անցեալով ոգեւորուած, անցեալում պրպտումներ անող ժամին իսկ մի խիստ դատապարտելի անտարբերութիւն, եթէ չապեմ նոյն իսկ արհամարհանք ենք ցոյց տալիս դէպի ազգային եկեղեցին:

Գրի, գրականութեան, արուեստի, իմաստասիրութեան ճրքան հարուստ գանձեր կան այդ հինաւուրց ազգային սրբազան հիմնարկութեան մէջ ու մենք անժանօթ, անտեղեակ այդ ամենին հեռու ենք կանգնում ու անուշադիր մնում դէպի մեր իսկ ունեցածը, մեր իսկ աշիւն քրտինքով երկնածը ու անվերջ զոհերով 16 դար սլաշտպանածը՝ այսօր մեզ հասածը:

Սթափման ժամն ենք ապրում. սալս թող ուժգինս սթափուինք. այդ շարտոճառարանուած, անհիմն մտավախութիւնը մի անգամ ընդմիշտ դէն շարտենք: Մտնենք այդ ազգային մշակոյթի մեծ գանձարանը սիրող սրտով, պարզ, յստակ մտքով, մեզ ունեցածի քնքոյշ զգացումով:

Մեր ինքնուրոյն, ազգային մշակոյթի զարգացման մեծ գործունի՝ ազգային եկեղեցով եւս հետաքրքրուելու, վերաշինելու, զարգացնելու անհրաժեշտ պահանջը կայ եւ հայ մտայնութիւնը պարտաւոր է այդտեղ իւր ներգործոն աշխատանքը ցոյց տալու, իւր վերաշինող գործը հանդէս քերելու:

Թողնենք մտավախութիւնը ու ազգային եկեղեցին մտնենք մեր ուրոյն մշակոյթի շատագովութեան, զարգացնելու անխախտ պահանջով:

Քիւս արեղայ:

